

նոնք՝ որոց հարստութիւնը կը բաւէր տուկալու այդ երկարատեւ ու չափազանց ծախուց: Բայց ամէն վիճակի անձինք ալ կը ջանային իրենց չափով զուարթ անցընել բարեկենդանը: Մինչեւ անգամ հայ ժուժկալ մենաստանը իրենց սովորական ոճէն դուրս կ'ելնէին, ինչպէս կ'աւանդէ Տաթեւացին, ըսելով թէ այդ առթիւ «յամենայն տեղիս՝ ի վանորայս եւ յանապատս ներեն սակաւ ինչ ի չափաւոր վայելս» (Հրց. 657):

Բարեկենդանը մեր քով կը տեւէր երկու շաբաթ անընդհատ, այս ինքն Առաջաւոր պահոց աւարտելէն մինչեւ Մեծ պահոց սկիզբը. այսպէս կ'աւանդեն Գր. Արշարունին (ԺԳ), «Սակս ժողովոց» գրուած թիւնը (Թղթ. 232) եւ ուրիշներ:



### Բ. ՊԱՀՔԵՐ ԵՒ ԾՈՄԵՐ

Այդպէս կոչուած են տարւոյն այն օրերը, որոց մէջ հաւատացեալք օրինօք կամ կամաւորապէս կը հրաժարէին կամ կը «պահէին» զիրենց փափուկ կերակրներէ: Այս զրկումն ըստ Հարց կը մեղմէր մար-